

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Այս Սրբազան հաստատությունը հիմնուած է հայ հոգիին սիրոյն և վստահութեան վրայ, որ կը բխի այն պայծառ համոզումէն թէ հայ հոգին կը շարունակէ իր առաքելութիւնը՝ զոր մեր Փրկչի անմիջական աշակերտներէն՝ Գլխադիր և Տեառնեղբայր առաքեալները սկսած էին, և ուր աւելի ետք պիտի գային իրար ձեռք տալ Հայ Մարդուն եղբայրութիւնն ու հայ հոգիին փառքի աշխարհացրիւ հաւատաւորները: Սակայն լրացնելու համար պատկերը մեր այս սփիւռքեան հաստատութեան, դժբախտաբար գտնուեցան և տակաւին կան հոգիով դեղնախտէ տառապող մարդիկ, հայեր, որոնք մերժեցին տեսնել Պատրիարքութեանս լոյսը և նախընտրեցին՝ խաւարը, որոնք իրենց կարելին փորձեցին ցանելով շռայլ առատութեամբ իրենց հոգիին ու մտքին ժանտաշուրը այս պատմական ու փարթամ եղենիին վրայ, անշուշտ մոռնալով կամ տգիտաբար անտեսելով այն պարզ իրողութիւնը, որ մեր Հաստատութեան սրբատաշ քարերը չէին բռներ ցեխ ու կեղտ և անոր հիմերը արդէն զետեղուած էին Բարձրեալին կամքովն ու օրհնութեամբ:

Հայոց Պատրիարքարանը միշտ ջերմեռանդ սիրով ընդունած է Հայ Ուխտաւորները, որոնք հնագոյն դարերէն իսկ իրենց հոգիին գանձարանէն ու սիրտէն միշտ թողած են իրենց Այրիի Լուման և կամ իշխանավայել նուէրը Ս. Աթոռոյս գանձատունին, որպէսզի Ս. Յակոբեանց Զինուորեալ Միաբանութիւնը շարունակէ պաշտպանել մեր ազգային իրաւունք Տէրունական սրբավայրերը: Ու այս օրերուն, ցոյց տալու թէ ի՞նչ չափով Հայոց Պատրիարքութիւնը հաւատարիմ մնաց իր կոչումին, այդ ալ գործ է արդար խղճի և անաչառ քննադատութեան, և ոչ թէ ինքզինքնին առանձնութեան ցուրտին և անորոշութեան բուքին բռնած կարգ մը անսեռ կուսակցականներու դիրքորոշումին:

Կար ժամանակ երբ մենք ունէինք անկեղծ ու նուիրեալ բարեկամներ, սակայն առանձին ենք այսօր, բայց երբեք լքուած, Պօղոս Առաքեալին իսկ բառերով, «Եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեզ հակառակ»: Եթէ մէկ կողմէն զաւակները մեր երբեմնի բարերարներուն լքեցին մեզ, սակայն միւս կողմէն անվերջ հոսքը մեր հայ ուխտաւոր քոյրերուն և եղբայրներուն և անոնց տաք շունչը դարձեալ ջերմացուցին մեր էութիւնը և գունաւորեցին մեր կեանքը: Ճաճանչային, երկնային ու գեղեցիկ բան մը կայ փոխուած մեր էութիւններէն ներս, հազուադիւտ երեւոյթ մը անտեսուած և ընդհանրապէս մեր իսկ հովուապետէն լքուած և արտասահմանի հայութենէն մոռցուած վանական մեր կեանքին մէջ, երբ կը վերանորոգուին հնադարեան եկեղեցիներ և վանքեր մեր իսկ սահմանափակ միջոցներով և ոյժով. «Զի Աստուած ընդ մեզ է»: Եթէ տակաւին երէկ՝ ցաւը անյուսութիւնն ու մտահոգութիւնները մեզ հոգեպէս տանջող մղձաւանջեր էին, այսօր՝ փա՛ռք Ամենակալին այս Հաստատութեան կեանքը աւելի մխիթարական ու պայծառ ապագայ մը կ'ակնկալէ, մի՛շտ վստահելով անկարելիին որովհետեւ կը հաւատանք մեր ժողովուրդի խիղճէն աւելի՝ արդարադատութեան, որուն համար իսկ կը քաջալերենք նոր ուխտագնացութիւններ դէպի Ս. Քաղաք՝ Երուսաղէմ: Այս նոյն հաւատքն էր, որ դարերով հաստատուն պահեց այս Աթոռը և անոր ուխտադիր միաբանները պիտի շարունակեն հաստատուն ու վառ պահել Գլխադիր, Տեառնեղբայր, Պարոնտէր և Շղթայակիր Պատրիարքներու կտակը: